

Դ Է Լ Ի * Յ Ո Վ Ա Կ Ի Մ

(Հին անցեալից)

14. Թուականն էր :

Ամբան վերջը :

Մայր մանուկ արեւի ճառագայթները անցնելով Կաֆա** քաղաքի շէնքերի, եկեղեցիների և երկու ամբողջների պարիսպների վրայով և դրոշմելով այնտեղ իրենց ջերմ, կրակոտ համբույրները, թափուած էին լայնածառայի և Մովր և սկսուած էին այնտեղ պլպլալ անվերջ երերուն ցոլքերով :

Մովր ծիծաղում էր և ժպտում :

Ձով քամին, հազիւ հազ դիպչելով նրա մակերևոյթին, մեղմ շոյում էր նրա փերուշեայ ջրերը, և, հասնելով քարոտ եզերքին, բարձրանում էր վերեւ և սկսում էր խաղալ մշտադալար, ախուր, սպաւոր նոճիների հետ :

Արեւի երփներանգ կլորակը կամաց կամաց իջնում էր ծովը, շառագունելով նրա աւաւոր մակերևոյթը և տալով իւր վերջին հրաժեշտը Փրէնկ - Հիսար*** բերդին, որի գլխաւոր Իսկէյէ - Ղափու դարպասի վրայ, սրպարտ ծածանում էր Ջենովացիների դրօշապը :

Այն ներկերը, որ մի քիչ առաջ բնութիւնը

ցողել էր Կաֆայի վրայ, սկսեցին փոփոխուել վառ կարմիրը տեղի տուեց նախ նօսր, ապա մոյգ կապոյտին, յետոյ մշուշոտ սեւին և մի քանի ժամանակից մութ ստուերները պատեցին ամբողջ քաղաքը և մօտակայ լեռները :

Կաֆայի բազմաթիւ տների պատուհաններում երեւաց խաղաղական պզնձեայ ճիւղաւոր կանթեղների աղօտ լոյսը. սրճարանների և գինեանների գոյնզոյն ապակեայ լապտերների կրակները սերախ սերախ փայլեցին հրապարակում, գլխաւոր փողոցներում, նաւահանգստում և վերջ ի վերջոյ հետու ծովում վառուեց Կաֆայի փարօսը և ձգեց ծովի մոյգ ջրերի վրայ մի երկար, դեղնապոյն, միշտ երերուն, նեղ շերտ :

Քաղաքի գլխաւոր դարպասը փակուեց. գիշերապահ գունդը դիրք բռնեց Փրէնկ - Հիսար աշտարակների վրայ և կեանքը, որ ցերեկներին ետում էր այգ ծովեզրեայ, մեծ, սոււաւական Փակտօրիայում, կամաց, կամաց մարեց :

Գիշերուայ խոր սուսունքի մէջ երբեմն էլ բեմն լուսուած էին գիշերապահ ջենովացի և հայ զինուորների բացազանչութիւնները :

— Ժամը գիշերուայ մէկն է. խաղաղութիւնը նր ախրում է Կաֆայում . . . :

* Գիծ

** Այժմեայ Թէոդոսիա քաղաքը Ղրիսու 1 : Թաւօթ . Հեղինակի .

*** Ջենովացիների բերդը Կաֆայում : Մ . Հ .

Կրտսեր, կեղտոտ գինեաւունը, որ գունդում էր Կաֆայի յետ բնկած փողոցներից մէկում, լուսաւորուած էր. նրա մեծ գաւլիճը իւր խոնաւ, բորբոսնած պատերով, տեղ - տեղ

փշրուած ձեւով եւ աղքատիկ կաշ-կարասի-
քով մի խոտու, անխորթ սպաւորութիւն էր
թողնում զխոտով վրայ: Գահլիճը լի էր խայ-
տաճամուկ ամբոխով:

Այստեղ հաւաքուել էին Կաֆայի անգործ, աշխատանքը վաղուց թողած բանուորներ, նա-
ւաստիներ, ծառայութիւնից փախած զիւսու-
ներ, մաքսանենդներ, ծովային սուպալ՝նի,
մի խօսքով այն տակաւնքը, որ կեանքը անխոտ
տրորելով իւր ճիւղաններէ մէջ, ձգել, շարտել
էր մի կողմ, իրրեւ մի անպէտք, հնամաշ լաթ:

Գինու գոլորշիներից եւ ծխախոտն լի
ձուխից նեխուած օդում անդադար հնչում էին
խոտոտ աղաղակներ, անէծքներ, հայհոյակ
եւ լիտի ծիծաղ:

Երեւում էին կարմրած, քրտնած գէւքնի,
որոնց վրայ կարիքը դրոշմել էր իւր կնիքը,
աչքի էին ընկնում կիտած յօնքեր, արլ յա-
խան աչքեր, որոնց չոր կրակը սարսախ էր
աղղում զխոտղին, երեւում էին օր առաջ օն-
րացած, մաշուած, արիւնաքամ կանացի է-
ներ, կարմիր ներկերը թշերին, տխուր, սեւ-
րակ աչքերով, որոնք անշուշտ տեսած էին սր-
բեմն, անցեալում, դուրս, մայրական սէր, ա-
ղորր, խաղաղ, բնասնական կեանք եւ սրանց
համար այժմ փողոցը միայն դարձել էր հարա-
զատ օճախ:

Այդ պտունիկ կանանց ծիծաղը, շարժուածք-
ները, մերկ պարանոցները եւ կրծքերը լիտի
կերպով աշխատում էին գրգռել աշաճարդ շա՛յ
անասնական կիրքը եւ վաւաչոտ սովանքը:

Մի քանի սեղանների վրայ խաղում հըն
լօթօ, տօմինօ եւ նարդի:

Գահլիճի հեռուօր անկիւնում սեղանի
չուրջը նստած էին չորս մարդ եւ նրանց առաջ
դրած էին գինու կիտով շափ պարապ շիշերը.
այդ չորսից մէկը, իւր արտաքինով եւ մանա-
ւանդ երեսի նուրբ դժագրութեամբ գանաշա՛ւ-
ւում էր իւր հնամաշ ցնցոտիների մէջ փախ ար-
ուած, գոհճիկ ընկերներից. նրա նոր, սեւ մա-
հուկից կարած չորը, նրա երկար վերարկուն

եւ լայնեղբի գլխարկը, նրա կարմիր կաշուրց
մեծ, լայն ճիւղերով կոշիկները արծաթեայ
խթաններով, նրա երկար սուրը եւ սեւ ձեռ-
նոցները, - ցոյց էին առլիս ակներեւ, որ նա
մի ազնուական Ջենովացի է. միւս երեքը խոկա-
կան ծովային գայլեր էին, թուխ, արեւատ,
խորը կնճիւններով ծածկուած երեսներովը, ա-
հանգիստ վաղվոր աչքերով, որոնց մէջ կաշ-
լի էր նշմարել եւ արիւթիւն, եւ ոճիր:

— Հասկացա՞ք, շնչաց ազնուականը:

Ծովային գայլերը, միայն գլխով աւելն
գրական պատասխան:

— Վաղը, կէս գիշերին նա կը լինի մեծ
հիւպատոսի պալատի առաջ. դուք վաղորօք դը
թաքնուէք մօտակայ պարտէզի անկիւնում եւ,
երբ նա երեւայ, դուք խոյն . . . հասկացա՞ք:

— Porco Madonna, սինետ, մենք էլ ե-
խաներ չենք եւ մեր գործը քաջ գիտենք, ան-
բաւական ձայնով նկատեց գայլերից մէկը

— Ուրեմն դաշինքը կապուած է:

— Այո՛, վկայ դժոխքը, շնչաց միւսը, որ
ըստ երեւոյթին գայլերի պեան էր:

— Ստացէք ձեր վարձը:

Եւ ազնուականը ձգեց սեղանի վրայ սովով
լի քսակը, վեր կացու, իջեցրեց գլխարկի ա-
ղբերք մինչեւ յօնքերը, փաթաթուեց իւր շայն
վերարկուի մէջ եւ շտապ թողեց զիննասունը:



Կաֆայի մեծ հիւպատոսը Պիէտտօ Սուլա-
սելլին նստած իւր չքեղ դարդարուած առանձ-
նասնեակում պարապում էր:

Նրա առաջ ընկած էր Վենետիկի Դօմի ն .
մակը:

Նա ուշի ուշով նայում էր մաղաղաթիւն,
տանում էր ձեռքը ճակատին, շփում էր կնճիւ-
ները:

Նա յուզուած էր:

Գոթական ճաշակով շինուած նեղ ու եր-
կար, կամարակապ պատուհաններից իջ՛ում

էին ոսկեթել թաւշեայ վարսոյրներ, ամբա-
ցած սրտերին լայն արծաթեայ օղակնեայ,
մարմարոնեայ յատակին փռուած էր արնակը-
եան հաստ, փափուկ զօրգը :

Սենեակի ամբողջ կահ-կարասիքը բեր-
ուած էր Իտալիայից եւ նրա մէջ աչքի էին
բնկնում Վենետիկի ականակուռ փականքն ը վ
փայտեայ արկղները, զոյնզոյն աղակիներով
Եոթտանի կանթեղները, միջնադարեան ասելի-
տական զրահները, զանազան դարերի զէնքեր,
թաթարական նետեր եւ աղեղներ, հին մաշա-
ղաթները եւ ձեռագիր աւետարանների հաւու-
քածուն, դարսած էր կաղնեայ մեծ սահաւոր-
նում, որի ազակեայ դռները վրայ նկարած էր
Ջենովայի զինանիշը :

Պիկտոս Սալտուելին մի երկարահասակ,
զեռ ատոյղ ու ժիւր մարդ էր. նրա երկար եւ ա-
լիխաոն մազերը թափուած էին նրա թաւշեայ
կտորակ զլիսարկի տակից նրա լայն ուսերին եւ
նրա խիտ յօնքերի տակից նայում էին զեռ
երիտասարդ, կրակոտ աչքեր :

Այդ աչքերի հայեացքը մեզմ ու փայ-
տալով էր եւ միեւնոյն ժամանակ խորը ներս
թափանցող :

Կաֆայի մեծ հիւպատոսը այրի էր :

Երեք տարի առաջ նա թաղեց կնոջը եւ այդ
օրից ամբողջ իւր սէրը, յոյսը եւ արտօմնքը
ամփոփեց իւր միակ աղջկայ մէջ, որ բոլոր-
ում էր քրտնեւորդ գարունը : նրա անունն էր
Մարիէտտա :

Պիկտոս Սալտուելին զեռ շարունակում էր
զրազմունքը, երբ առանձնասենեակի շէմքում
էրեւաց ծերունի սպասաւորը :

— Սինեօս, Դարեջանենց աւագ սուրճն
Մուրատը թոյլտուութիւն է խնդրում ներկայա-
նայ ձեզ :

Մեծ հիւպատոսը կիտեց յօնքերը եւ ձշն-
լով Դօփի նամակը զրտակզանի արկղը, ալ տա-
սանեց .

— Աւագ սարսուճ, խնդրի՛ր, խնդրի՛ր :

Մի բոսկից վարսոյրի ետեւից երէւաց

Կաֆայի Հայերի աղագագեա աւագ սարսուճ
Քատը :

Մեծ հիւպատոսը վերկացաւ, զնաց ընդա-
ռաջ հիւրին եւ, զնելով ձեռքը նրա ուսին, մի
կորայրական համբոյր զբռնեց նրա շրթնե-
րին :

Եկտրը մի սրտակառելի ծերունի էր, կործ
խուզուած սպիտակ մազերը, բրդոտ յօնքերը,
լայն ճակատը, խելացի եւ թախծալից աչքն-
րը, երկար, հաստ բիւրերը, որոնք հասնում
էին կղակին, — այդ ամենը մի ակամայ յար-
զանք էին յարուցանում զխոտղի մէջ :

— Ազա Մուրա՛տ, վերջապէ՛ս. նստէք,
նստէք, սիրելի բարեկամ, վաղուց, շատ չ՛ա-
ղուց ստք չէք կոխել իմ չէմքը, այս ս՞ր քա-
մին փչեց . . .

— Ո՞ր քամին, նկատեց նստելով աւագ
սարսուճը, ինչի՞ց սկսեմ :

— Մի՞թէ այդպէս լուրջ է հարցը :

— Այո, շատ լուրջ : Դուք, սինեօս, լաւ
զիտէք, որ Խանը եւ Թաթարները սրում են ա-
տամները թէ՛ ձեր Ջենովացիներիդ, եւ թէ՛
մեր, Հայերիս, դէմ : նրանք նախանձում են
մեզ, մեր օրէ ցօր զարգացող, ածող առեւ-
տրին, մեր արհեստներին, մեր շէն քաղաքնի-
րին, մեր հարուստ վանքերին եւ եկեղեցինե-
րին :

— Անշուշտ, այդպէս է :

— Բայց նախանձից ջոկ նրանց սրտում
կայ եւ մի ուրիշ զգացմունք. այդ վախն է :

— Վա՞խը . . .

— Այո, նրանք մշտական ա՛հ ու դողի մէջ
են, որովհետեւ մենք զօրանում ենք. նրանք հե-
ռատես են. նրանք լաւ հասկանում են, որ մեր
մէջ մինչ այժմ գոյութիւն ունեցող սերտ, կղ-
բայրական կապերը տալիս են մեզ այնպիսի
ոյժ, որ ապագայում կարող է լինել նրանց ան-
կախութեան համար շատ եւ շատ վտանգաւոր .
Ռուսաց տունը անդադար մօտենում է Թաթար-
ների սահմաններին . . .

Եւ դուք կարծո՞ւմ էք .

— Ես համարուած եմ, սինեօս :

Եւ աւագ պարօն Մուրատը լուեց :

— Շարունակեցէք :

— Միարանութիւնն է մայր բարեաց եւ ես եկել եմ ձեզ մօտ, սինեօս, յատկապէս դէրձացնելու ձեզ, որ այդ միարանութեանը այժմ վտանգ է սպառնում :

— Վտանգ ... ի՞նչպէս :

— Հասկմբ ճիւղ է թափում կլանել մեր դարեւոր եկեղեցին, մեր հաւատը :

Եւ ազա Մուրատը ուղղակի նայեց մէծ հիւպատոսի աչքերին :

— Հասկմբ ... որքան ես դիտեմ ...

— Թողնենք քաղաքականութիւնը եւ խօսինք սրտանց, սինեօս. կաթողիկ արեղաները թափում են ամեն ճիւղ որսալ հայադաւաններին, լուսաւորչականներին, մանաւանդ մեր պնտականութեան մէջ. շատացէք, սինեօս, ինչո՞ւ եմ այդ վանքերը. մի՞թէ Հասկմբ չէ հասկանում, որ դրա միակ հետեւանքը կը լինի երկու ազգի մէջ երկպառակութիւն, որ մայր է ամենայն շարեաց, ինչպէս ասում է մեր պատմարանը :

Պիկտոօ Մավառելին ձգել էր հայեացքը գետնին եւ լուս նայում էր մարմարի նախշերին :

— Մի՞թէ Հասկմբ երազում է, որ բուն հայ Ժողովուրդը, հայ գիւղացին, արհեստաւորը, բանորրը, սանչպարը եւ վաճառակոնը կը թողնեն իրենց նախնիքների հաւատը, իրենց բազմաշարժար եկեղեցին եւ կ'ընկնին կաթողիկ եկեղեցու գիրկը... երբեք. ես Հայ եմ եւ լաւ ճանաչում եմ իմ ազգը. նա, սինեօս, շատ պինդ, շատ սերտ կապերով կապուած է իւր եկեղեցու հետ. մենք աւա՞ղ, կորցրինք մեր անկախութիւնը եւ այժմ մեզ համար մեր եկեղեցին մեր պետութիւնն է, մեր արքունիքը, մեր գոյութեան, մեր լինել չլինելու հիմնաքարը եւ յենարանը ...

Եւ ազա Մուրատը կտրեց իւր խօսքը : Եւ

մեծ թաշկինակով սրբեց ձախտի քրտինքը :

Սենեակում լուս էր :

Մեծ հիւպատոսը կրացրել էր գլուխը կրծքին եւ մեքենայարար դարկում էր սեղանին իւր երկար, շոր մատներով :

— Դուք իրաւ էք, ազա Մուրատ, վերջապէս արտասանեց նա, Հասկմբ հետուից իրապեկ չէ այստեղի դրութեանը եւ չգիտէ որ Ջենովացիներին եւ Հայերին մէջ եթէ մի օր ծագէ երկպառակութիւնը, դա կը լինի օրհասական երկու ազգի համար :

— Ճշմարիտ էք, մենք պէտք է լինենք իւրար ձուլուած, մի սիրտ, մի հոգի, որովհետեւ մեր կողքին միշտ արթուն է մեր սխիւմ թշնամին, Թաթարը : Միջամտէք, գրեցէք Գօթին, գրեցէք Պապին եւ թող մնայ Հայը կրօնով լուսաւորչական, իսկ Բողայցին կաթողիկ :

Եւ աւագ պարօնը կրկին լուեց :

Նրա երեսին եւ աչքերին պատեց խոր թախիծը :

Նա այդ վայրկեանին յիշեց իւր ազգի անցեալը, այն դուրսի օրերը, երբ ընկաւ Անին, Բաղրատունեաց աթոռը, երբ նա դարձաւ կուսապատճառ Յոյների, Վրացիների եւ Բուրքերի համար, երբ երկրաշարժից յետոյ Անիի բնակիչները թողին մայր երկիրը եւ ցրուեցան աշխարհիս շորս կողմը, երբ Անիի «հազար եւ մէկը» եկեղեցիները դարձան կամ մզկիթները եւ կամ խարխուլ աւերակներ, երբ վերջապէս հասաւ 1330 թուականը եւ Հայերը անտանելի նեղութիւններից յետոյ հասան Տարիկեան թերակղզին եւ այնտեղ գտան իրենց երկրորդ հայրենիքը :

— Դուք իրաւ էք, ես կը գրեմ այդ մտտին ուր հարկն է, նկատեց մեծ հիւպատոսը :

Ազա Մուրատը սթափուեց ախոր խոհերից :

Սուտունքը տիրում էր սենեակում :

Մի մեծ ճանճ, անդադար բզրկալով, դարկում էր պատուհանի գոյնգոյն սպակիներին :

— Այլիւր բարձեցի՞ք նաւ - կտրեց մեծ

Հիւպատոսը տիրող լուսթիւնը :

— Այ՛, այսօր լուսաղէմին չորս նաւ նա- նազար՝ ընկան Իտալիա :

— Ի՞նչպէս էին գները :

— Վնաս չունի. հոգազործը լաւ վարձ ստացաւ :

— Օ՛, այդ շատ լաւ է, մենք սկսուաւ ենք մրցել Մարսէլիի հետ :

Այդ վայրկեանին ներս վաղեց Մասու, աս- ասան, մեծ հիւպատոսի գուտորը :

— Հայրի՛կ, արտասանեց նա եւ իսկոն ն լուեց, տեսնելով, որ հայրը մենակ չէ :

— Ե՛կ, Է՛կ, աղջիկս, մի՛ քաջուիր, իմ հիւրը քո վաղեմի բարեկամն է, աւագ սրբուն Մուրատը :

Մասիէտտան մօտեցաւ եւ ցածր գլուխ տուեց :

— Ապրի՛ս, դաւակս, օ՛, որքան զեզեցկու- ցել ես. Կաֆայի երիտասարդները երեւի կոր- ցրել են քո տեսքից իրենց քունը, ծիծաղով նը- կատեց աղա Մուրատը :

— Օ՛, սինեօս, չնչաց Մասիէտտան, ին- չե՞ր էք ասում :

— Ինչո՞ւ ես կարծրում ... չլինի թէ աղա Մուրատը գիտէ քո գաղտնիքը, աղջիկս, նկա- տեց ծիծաղով մեծ հիւպատոսը :

— Հայրիկ, հաշը պատրաստ է :

— Հիտանալի է. գնանք, աղա Մուրատ, հաշենք այսօր միասին :

— Նեղութիւն մի քաշէք, սինեօս, ես...

— Համեցէք, այսօր ունինք խաշած ձուկ. ես եմ պատրաստել, նկատեց Մասիէտտան.

— Եթէ այդպէս է, ես ամենայն սիրով ...

— Այո, եւ դեռ խօսելիք ունիմ ձեզ հետ մեր բերդերի մասին. Մասիէտտա, ասա անտե- սին, որ նկուզից բերէ մեզ համար երկու շիշ այն գինուց, որ վերջերս ստացայ Սանթօնի- նոյից :

— Իսկոյն, հայրիկ :

Եւ Մասիէտտան թեթեւ քայլերով հեռա- ցաւ սենեակից .

— Չմտնաք զրեւ, սինեօս, Դօմին :

— Ոչ ... ոչ ... հանդիսաւ եղէք ... հա, մեր եւ Հայոց բերդերի մէջ պէտք կը լինի անց- կացնել ստորերկրեայ խրամներ, որովհետեւ... Եւ խօսակիցները մտան սեղանատուն :

**

Գիշեր էր :

Մութ, խաւար գիշեր :

Ամսրամած երկնքում չէր փայլում ոչ մի աստղ :

Քամին կատապի մոնչում էր Կաֆայի ա- մայի փողոցներում, ուժգին զարկում էր չէն- քերի քարաաշ պատերին, ամբոցներին երկա- թեայ գարպաններին եւ, հասնելով աների կը- տուրներին, մտնում էր երգիկների մէջ եւ սկսում էր խը վայնասունը :

Կաթոյլիկ Սուրբ Ազնէս Եկեղեցու զանգը զարկեց կէս գիշեր :

Մեծ հիւպատոսի սրալատի գլխաւոր մուտ- քի առաջ երեւաց վերարկուի մէջ մինչեւ կզա- կը փաթաթուած մի մարդ :

Նա յտեց աչքերը սրալատի երկրորդ յար- կին եւ սկսեց գիտել :

Անցաւ մի քանի վայրկեան :

— Ես չեմ տեսնում սպամանանշանը ... զարմանալի է, փոփոսաց քթի տակից անձանո- թը :

Այդ վայրկեանին սրալատի պատուհաննե- րից մէկում երեւաց կանթեղի աղօտ լոյսը :

— Վերջապէս, ուրախ չնչաց անձանոթը եւ մօտեցաւ պատուհանին :

Նոյն բողբոջին փողոցի անկիւնից դուրս ե- կան երեք մարդ, նրանք նայեցին շուրջը եւ, քուսելով պատերին, գաղտաղօղի մօտեցան անձանոթին եւ մի ակնթարթում յարձակուե- ցին նրա վրայ :

Շուարած՝ անձանոթը չկարողացաւ ան- դամ մերկացնել սուրը :

Չարագործներից մէկը արդէն մօտեցրել էր

դաշոյնը անձանթի կրծքին :

— Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, տարածուեցաւ զիշերային խաւարի մէջ անձանթի յուսահատ, սրտամաշ ձայնը :

Փողոցի միւս անկիւնում երեւաց մի ստուեր . լսելով այդ անդրոգորմ՝ ճիչը, նա խաղոյն եւ եթ հանեց պատեանից սուրբ եւ ընկաւ չարագործների վրայ :

— Յեա քաշուեցէ՛ք, յե՛տ, անիրաւներ, դոտաց նորեկը, յենուելով պատին եւ իւր յաղթանդամ մարմնով պաշտպանելով անձանթին :

— Porco Madonna, երեւի դու էլ այս զիշեր ցանկութիւն ունես գնալ ի վերին Երուսաղէմ . դէ՛հ, համեցէ՛ք, խոստոս ձայնով բացադանչեց չարագործը եւ յարձակուեց անկոչ պաշտպանի վրայ :

Վերջինս վիթխարի հասակով, ուժեղ, լայն ուսերով մի երիտասարդ էր :

Նա դիտմամբ թոյլ սուեց չարագործներին աւելի եւս մօտենալ իրեն եւ պատեհ ընդհանր իջեցրեց մի ծանր հարուած նրանցից մէկի գլխին :

Չարագործը տապալուեց գետին եւ նրա կոկորդից դուրս թռան մահուան խոխոցի հեծկտանքները :

Այդ միջոցին անձանթը, տեսնելով անըստ պատելի օգնութիւնը, հանեց երկար սուրբ եւ սկսեց պաշտպանուել :

Կոխը դարձաւ հաւասար :

Գիշերային սուսունքի մէջ լուում էին միայն կուռոցների ծանր շնչառութիւնները, նրանց հատ ու կտիր բացադանչութիւնները, սրնրի շառաչիւնը եւ կատաղած չարագործների լիտի հայհոյանքները :

Մի քանի ընդհանր չարագործներից մէկին յաջողուեց կտարել անձանթի սուրբ եւ իւր դաշոյնը արդէն փայլեց նրա ուսին, երբ նորեկը վազրի թոխչքով յարձակուեց նրա վրայ եւ խրելով սուրբ նրա կուրծքը, տապալեց նրան գետին, եւ կրկին արագ յետ քաշուելով իւր

խոչոր, քառակուսի թիկունքով ծածկեց անչէն անձանթին :

Այդ միջոցին պալատի երկրորդ յարկի լուսաւորուած պատուհաններից մէկը բացուեց եւ այնտեղից կուսացաւ փողոց մի ստուեր :

Դա Մատիէտտան էր :

Տեսնելով կոխը, նա սրտամաշ ձայնով ճչաց :

— Անտոնիօ՛ . . .

Անձանթը բարձրացրեց գլուխը եւ դարձրեց երեսը պատուհանին :

Օգտուելով այդ պատեհ ընդհանր, չարագործը խրեց դաշոյնը անձանթի ուսը եւ արագ փախչելով կորաւ զիշերային մթութեան մէջ : Վերաւորուած անձանթը հառաչելով ընկաւ մայթի վրայ :

— Մատիէտտա՛, կարողացաւ միայն շշտալ նա իւր այրուող, չորացած շրթներով եւ փակեց աչքերը :

— Սինեօտա, ուղարկեցէ՛ք այստեղ ծառաներին, թող բերեն ջահեր եւ պատգարակ, աղաղակեց նորեկը, գնելով արիւնոտ սուրբ պատեանի մէջ :

— Օ, Santa Madonna, արտասանեց Մատիէտտան եւ փակեց պատուհանը :

Մի քանի ընդհանր պալատի գլխաւոր մուտքը բացուեց եւ մեծ հիւպատոսի տնտես եւ ծառաները թափուեցին փողոց :

Ջահերի լոյսը լուսաւորեց երկու դիակ եւ վերաւորուած Անտոնիօի մարմինը :

Տնտեսը եւ ծառաները զգուշութեամբ վերցրին վերաւորուածին, դրին պատգարակի վրայ եւ մաքրելով վէրքը, կապեցին նրա շուր :

Վերաւորուածը բացեց աչքերը :

— Ո՛ւր է . . . իմ աղատիչը . . .

— Ես այստեղ եմ, սինեօ :

— Դուք փրկեցիք կեանքս . . .

— Մի խօսէ՛ք, սինեօ, այդ ձեզ վնաս է :

— Ո՞վ էք դուք . . .

— Ես . . . ինձ կանչում են դէլի Յովակիմ, պատասխանեց երիտասարդը եւ շտապ քայլե-

բով անհետացաւ զիշերային խաւարի մէջ:

Վիրաւորեալին տարին ներս:

Անցաւ երկու ամիս:

Վիրաւորուած Անտօնիօ Բօուլաթօն դեռ անկողնումն էր. նրա վէրքը թէեւ մահաբեր չէր, բայց եւ այնպէս չարագործի դաշոյնը շատ խոր էր մտել նրա ուսի մկանունքներէ մէջ:

Բժիշկը, որ ամեն օր այցելում էր նրան, յոյս էր տալիս, որ հիւանդը չուտով բոլորովին կը կազդուրուի:

Անտօնիօի անկողնի մօտ միշտ նստած էր լինում նրա քոյրը Մառչեւլան:

Մօտ 18-20 տարեկան, նա արտաքինով հեղափոխական էր մի անխոն, կատարեալ տիպար միջնադարեան Իտալուհու:

Սեփ-սեւ, խոշոր, գեղեցիկ դժագրած աչքերով, կամարակապ յօնքերով, իփքրիկ բերնով, որի նեղ շրթները եւ հպարտ էին եւ միեւնոյն ժամանակ խոստանում էին ա՛յնքան սէր եւ երջանկութիւն, տաշած քթով եւ մարմարիոնեայ մորթով, Մառչեւլան իւր տեսքով առաջին գեղեցկուհին էր ամբողջ Կաֆայում: Երկարահասակ, ճկուն, տատանուող իրանով, միշտ ժպտը երեսին, նա ամենուրեք յարուցանում էր հիացմունք եւ խորին յարգանք:

Շատ սրտեր Կաֆայում խոցուած էին նրա չքնաղ տեսքից, շատ երիտասարդների շըրթունքները զիշերային լուսթեան մէջ արտասանում էին նրա անունը եւ շատերը սխուք տոչորուած հայումաչ էին լինում Մառչեւլայի հմայիչ տեսքից:

Բայց նա, այդ բոլոր հոգեկան, սիրային տանջանքների կռուածադիկը, խաղաղ եւ անվրդով անց էք կացնում իւր օրերը հայրական տան կտրի տակ եւ սէրը դեռ չէր պաշարել նրա անմեղ, կուսական սիրտը եւ կեանքի վարդը դեռ չէր ցոյց տուել նրան ոչ իւր անուշահոտ բուրմունքը եւ ոչ էլ իւր փշերը:

— Անտօնիօ, սիրելիս, ինչպէ՞ս ես զչում քեզ:

— Լաւ եմ, Մառչեւլա, լաւ, դու այնպէս անձնուէր խնամեցիր ինձ, որ զարմանալի կը լինէր, եթէ ես վատ զգայի ինձ:

— Այս զիշեր դու հանդիսա քնեցիր:

— Ուրեմն, կրկին դու անքո՞ւն մնացիր մօտս:

— Ի հարկէ, չէ՞ որ ես սիրում եմ քեզ, Անտօնիօ, եւ արար աշխարհում քեզնից չո՞ղ ոչ ոք չունիմ:

Եւ Մառչեւլան իւր գողտրիկ ձեռքով շոյեց Անտօնիօի գանգրաւոր մազերն ու ճակատը:

— Սինեօն Յովակիմը չեկա՞ւ, հարցրեց հիւանդը:

— Ոչ:

— Նա շատ համեստ է. նա քաշում է մեզ նից:

— Մառչեւլան ինչ չպատասխանեց:

Նրա երեւակայութեան մէջ կենդանացաւ դէլի Յովակիմը, այդ քիչ անտաշ հայ պատանին, իւր վիթխարի հասակով, լայն ուսերով, երկաթեայ մկաններով, կարմիր, հաստ վզով, արեւառ երեսով եւ սեւ աչքերով, որոնք տղայական անմեղութեամբ նայում էին արար աշխարհին:

— Այո՛, սինեօն Յովակիմը քաջ է, շատ քաջ, նկատեց վերջապէս Մառչեւլան, բնկղմւած խոր խոհերի մէջ:

— Քա՛ջ ... նա հերոս է, քոյրիկ, հերոս. եթէ դու տեսնէիր այն աւազակներին ... օ՛, դիտե՛ս, նա յիշեցնում է հին Հռոմի կրկնում կուսող սուսերամարտիկներին, ստրուկներին, որոնք յանուն Կեսարի թափում էին իրենց արիւնը՝ կրկէսի գեղին աւազի վրայ եւ մեռնելիս աղաղակում էին — «Ave, Caesar, morituri te salutant»:

— Քիչ խօսիր, Անտօնիօ, քեզ մնաս է, նկատեց Մառչեւլան եւ վերցնելով սեղանից գեղի տուփը, թափեց փոշին ջրի մէջ, խառնեց եւ մօտեցրեց բաժակը հիւանդի շրթներին:

Նաժիշտը երեւաց դրան շէմքում :

— Սինեոն Յովակիմը ...

— Ոնդրիր, խնդրիր, ուրախ բացազանչեց Անտոնիօն եւ ուղղեց ոսկեթել վերմակը :

Մի վայրկեանից դէլի Յովակիմը մտաւ ներս . նա քաշուելով, կարմրելով մօտացաւ Մառչելլային, խոնարհ գլուխ տուեց եւ դարձաւ Անտոնի Բօուլաթօին : Վերջինս բռնեց տառոյջ ձեռքով եկուորի մեծ, լայն ավեր եւ թոյլ սեղմեց :

— Ո՛ւր էիք կորեւ, սիրելիս . դուք բոլորովին մոռացել էք մեզ . լաւ չէ, լաւ չէ ... :

— Ներեցէք, սինեոն, ես բացակայ էի քաղաքից . ես դործով զնացել էի Սուզաղ :

— Նստեցէք, աւելի մօտ ... խօսինք .

Դէլի Յովակիմը զգում էր իրեն շատ նեղ դուրսեան մէջ . այդ շքեղ կահաւորուած սենեակում, ուր դարսած էին այնքան ճոխ, հազուադիւրս գեղարուեստական իրեր, ցարդեր, դոյնզոյն ապակեայ անօթներ, կանթեղներ, արկղներ, զէնքեր եւ գրքեր :

Նա վախենում էր իւր ահագին ոտքերով եւ խոշոր ձեռքերով մի բան գետին տապալել, փշրել :

Նա հեւ ի հեւ անցաւ մի կերպ աթոռներէ, բազմոցների եւ «փարզա» բարձերի միջով եւ նստաւ հիւանդի անկողնի մօտ :

Նա դարմացած նայում էր շուրջը եւ 'յլա լայն բացած աչքերը վազվզում էին մէկ առաւկայից միւսը :

Նա աշխատում էր ըմբռնել, թէ ինչի՞նչ են պէտք այդ բոլոր մանրամունք իրերը սինեոն Անտոնիօն :

Յովակիմի անշուք սենեակում այդպիսի իրեր չկային . նրա ամբողջ կահ կարասիքը բազկացած էր հասարակ մահճակալից, երկու աթոռից եւ փայտեայ պահարանից եւ սեղանից :

Մինչդեռ այստեղ ոսկին, արծաթը, դահարեղէնները դարդարել էին ամեն մի անկիւն եւ դոյնզոյն ցուրբերով փայլում էին ամենուրեք :

— Ահա այն ուրիշ աշխարհը, որի մասին

ես լսել էի, մտածեց Յովակիմը, իշխանների, մեծերի, հարուստների աշխարհը . ո՛րքան նա զանազանուժ է ինձ ծանօթ աշխարհից ... եւ այս փարթամ կեանքը, այս ազնուականները, այս իտալացիները ... ո՛րքան նրանք նման չեն կոշտ ու կոպիտ Թաթարներին եւ անդամ մեր Հայերին . վերջապէս այս սինեոնան ... մի՞թէ աշխարհիս երեսին կան այսպիսի շքնաղ կախներ . մի՞թէ սա երազ չէ :

Եւ դէլի Յովակիմը ակնապիշ, զմայլած նայում էր Մառչելլային, նայում էր, օգտուելով այն բոպէներից, երբ Մառչելլայի ուշադրութիւնը զբաղուած էր լինում ուրիշ բանով :

Յովակիմի երեսի գոյնը զնում, գալիս էր եւ նրա խոշոր ձեռքերը, որ աւելի նման էին արջի թաթի, ցնցողաբար դողում էին :

Մառչելլայի հետաքրքութիւնը նոյնպէս զրգուած էր :

— Ի՞նչ հսկայ մարդ է այդ Հայը, անցնում էր նրա ուղեղով, ուժեղ, յաղթանդամ . ճիշդ, որ հերոս է . նա բոլորովին նման չէ մեր շրջանի երիտասարդներին, այդ թոյլ, համարեա կանացի կազմուածքով արարածներին . նա մի դիւցազն է, հէքեաթների հերոս, իսկ նրա աչքերը, անմեղ են, պարզ ... նա մի մեծ երախայ է, այո՛, այո՛, մի մեծ երեխայ ...

— Դուք ասացիք, որ Սուզաղո՞ւմն էիք :

— Այո՛, այնտեղ հօրեղբայրս ունի այգի, զնացել էի նրան օգնելու :

— Դուք միշտ պատրաստ էք օգնել ուրիշներին, մինչդեռ ինքներդ ...

— Ինձ ի՞նչ է հարկաւոր . ես մեն-մենակ եմ, որբ ... ես ծառայում եմ հայ գնդու՛, ես տասնասպետ եմ, օնպաշի ...

— Դուք, սինեոն, զինուորակա՞ն էք, հարցրեց Մառչելլան :

— Այո՛, սինեոնա :

— Միրո՞ւմ էք ձեր գործը, մըջամտեց Անտոնիօն :

— Ի՞նչպէս ասեմ ձեզ . սիրե՞լ ... ո՛չ, ես կը դերպագասէի հոդադործութիւնը :

— Բայց ինչո՞ւ չէք պարապում :

Գէլի Յովակիմը աւելի եւս կարծրեց :

— Տեսնում էք ... ես ... ես միջոց չունեմ ...

— Միջոց, բացազանչեց Անտոնիօն. լսեցէք, մեծ հիւպատոս Պիչտոս Սավառեւիլի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը շուտով լրանում է եւ ասում են որ այդ բարձր պաշտօնը յանձնելու են հօրեղբորս. ես կը խնայեմ, որ նա տայ ձեզ հողարածին, դործիքեր. չէ՞ որ ես պարտական եմ ձեզ :

— Օ՛, ո՛չ, շնորհակալ եմ, եւ սովոր չեմ ստանալ ձեր պարգևներ, եւ դուք, սինեօն, ոչինչ պարտական չէք ինձ, ոչինչ :

— Դուք փրկեցիք կեանքս :

— Դա իմ պարտքս էր :

— Դուք, սինեօն Յովակիմ, դեռ անփորձ էք. դուք անտեղեակ էք կեանքից. աշխարհս մեծ է, մի կարծէք որ արեւը փայլում է միայն այս Արիմում. օ՛, ո՛չ, եկէք, ես տանեմ ձեզ իմ հայրենիքը. դուք կը տեսնէք Հոովմը, Վենետիկը ...

Յովակիմը մի վայրկեան մտածեց .

— Ո՛չ, սինեօն, ես ծնուել եմ այստեղ, այստեղ էլ կը մեռնեմ. ես մի հասարակ մաշկ եմ եւ այդ Հոովմը, Վենետիկը ինձ համար

չեն. իմ պապս, հայրս, բոլորը եղել են նիկրագործ, հերկել են հողը, քրտինք են թախել, ես էլ կը լինեմ մի օր ... Գիտէ՞ք, հողը քարչում է. երբ կ'անարտեմ գինւորական ծառասութիւնս, ես կը գնամ հօրեղբորս մօտ, Սուդալ. նա անդաւակ է, ես կ'աշխատիմ նրա հետ ...

Եւ Յովակիմը լռեց :

Այդ պարզ, հասարակ խօսքերը խոր . պատրութիւն դործեցին Մառչեւլայի վրայ :

— Նա հպարտ է, ինքնասէր, մտածեց նա :

Ներս մտաւ նաժիշտը :

— Նախաձաշը պատրաստ է, տիրուհի

— Բերէք այստեղ :

Եւ փոքր ժամանակից յետոյ Մառչեւլ. եւ Յովակիմը նստանսեղան, որ դրած էր Անտոնիօսի անկողնի առաջ (1) :

ԳԷՈՐԳ ԶՈՒԲԱՐ

(Շար.)

(1) Մեր ողբացեալ աշխատակիցը՝ Գէորգ Զուբար, այս պատմական գեղեցիկ վիպակին ձեռագիրը մեզի դրկած էր մահուրնէն քիչ առաջ :